մինչեւ իսկ մեզ մօտ — Եւրոպայում» (Ա. 202)։

«Աբովեանի պապը,— ասում է Հաքստհաուզէն,— սովորութիւն է ունեցել՝ ամէն տարի իր կնոջ եւ որդիների հետ միասին ուխտի երթալու Էջմիածին։ Հայերի մօտ բարեպաշտական սովորութիւն է՝ բոլոր հինգ մեռելոցներին յարգել հանդուցեալների յիշատակը։ Այդ օրերը նրանք գերեզմանատուն են տանում՝ միս, հաց, գինի, պտուղներ, օրհնել տալիս հոգեւորականների ձեռքով եւ աղքատներին բաժանում։ Սովորութիւն է նաեւ՝ այդ օրերին տեղական եկեղեցուն առատ նուէրներ տալ։ Բայց ամենից առաջ՝ իւրաքանչիւր մէկը, եթէ միայն հնարաւորութիւն ունի, պատիւ է համարում իրեն՝ այդ օրերին պատրիարքանիստ Էջմիածնի Մայր Աթոռին նուէրներ տանելու։ Այսպիսով, անվերջ նուէրներ էին հոսում այնտեղ՝ Տաճկաստանից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Կ. Պոլսից, Մոսկուայից, Պետերբուրգից, Հաշտարխանից։ Իսկ նրանք, որոնք որ իրենց նուէրները անձամբ են այնտեղ տանում, վերադարձին պատմում են յուզմունքով եւ արցունքով, թէ ի՛նչպէս իրենք գնացել են այդ սուրբ վայրը, տեսել հայոց եկեղեցու կենտրոնավայրը, թէ ի՛նչպէս կաթողիկոսը օրհնել է նրանց, ձեռքը գլուխների վրայ դրել, թէ ի՛նչպէս իրենք համբուրել են նրա սուրբ ծունկը, ստացել կաթողիկոսի օրհնած մի բաժակ գինին եւ սուրբ նշխարը։

«Աբովեանը պատմում է։ Իմ պապի տանը ուխտագնացութեան պատրաստութիւնները տեսնում էին երկար ժամանակ առաջ։ Իմ հայրը եօթը տարեկան է եղել, հօրեղբայրս էլ ինն տարեկան, երբ նրանց առաջին անգամ Էջմիածին են տարել։ Նրանց հագցնելիս են եղել ամենաշնորհ կերպասից եւ մետաքսից կարած նոր հագուստներ. մէկ՝ փայլուն, մոյգ-կարմիր հագուստներ, մի երկրորդ անգամ՝ խիստ կանաչ, ուրիշ առիթով՝ կապոյտ կամ դեղին հագուստ։ Կարճ՝ ամէն տարի մի նոր գոյնի հագուստ։ Կօշիկները լինում էին կանաչ կաշուց կարած, որ հիանալի կերպով պատրաստում են ձիու մորթուց։ Բայց դա շատ թանդ արժէ, ուստի առնել կարող են միայն հարուստ, մեծատուն մարդիկ։ Տղաները այդպիսով փայլում էին եւ գեղեցկանում հրեշտակի նման։ Մի դաշոյն խրում էին գօտում, մի փոքրիկ սուր էլ՝ կողքից կախում։ Նրանք ճամբայ էին ընկնում՝ նստած կայտառ, սլացիկ ձիերի վրայ։ Երկու-երեք աւանակներ տանելիս են եղել վանքի նուէրները։ Մեծ հայրը, կնոջ հետ միասին նստած իր՝ սքանչելիօրէն զարդարուած նժոյգի վրայ, գնալիս է եղել առաջից, իսկ յետեւից՝ բազմամարդ քարվանը։ Ամէն մի գիւղի մօտ մարդիկ խմբուելիս են եղել եւ խրար ասելիս. «Ահա նորէն ուխտի է գնում բարեպաշտ մարդը։ Ո՞վ կարող է այդչափ բան անել»։ Դեռ հազիւ հասած վանքի մօտերը՝ նրանց դիմաւորելիս են եղել ցած աստիճան հոգեւորականներ, նրանց ընդունելու, ինչպէս եւ ծառաներ՝ ձիերը տանելու համար։ Վանքի բակում եպիսկոպոսներ եւ վարդապետներ են դիմաւորել նրանց, ոմանց կաթողիկոսն է ուղարկելիս եղել հիւրերին ընդունելու համար, ոմանք էլ իրենք են եկել ընդառաջ, որպէս հին բարեկամներ։ Ամէն մէկը ցանկացել է հիւրերին իր խուցը տանել։ Բայց անհամբեր պատրիարքը նրանց իր մօտ է ընդունել» Ա. 203–206)։

Շարունակութեան մէջ Հաքստհաուզէն առաջ է բերում Աբովեանի նկարագրութիւնը այն ջերմ ընդունելութեան մասին, որ վերջինիս պապը ամէն անգամ գտնելիս է եղել կաթողիկոսի կողմից, Էջմիածին ուխտ գնալով։

«Պատրիարքը իմ պապի հին ու սիրելի բարեկամն էր», որպէս այդպիսիք էլ նրանք վերաբերւում էին իրար։

Նոյնպիսի սրտագին ընդունելութիւն է ցոյց տալիս եղել կաթողիկոսը նաեւ Աբովեան ընտանիքի բոլոր անդամներին, մեծից մինչեւ փոքրը, որպէս իր հարազատների։

«Իմ հայրը»,— ասում է Աբովեան,— «միշտ էլ պատմում էր ինձ այդ ամէնի՝ որպէս իր մանկական ամենասիրելի յիշողութիւնների մասին»։

Ապա մանրամասն նկարագրութիւն ենք գտնում այն մասին, թէ ինչպէս էին վանքի միաբաններին բաժանում բերած նուէրները։

«Ամէն մէկը, պատրիարքից սկսած մինչեւ յետին ժամկոչը, ստանում էր իր նուէրը»։ Ամբողջ գումարը, բացի կաթողիկոսին տրուած նուէրից, 50–60 արծաթ ռուբլի էր անում սովորաբար։ Միաբանների թիւն էլ եղել է՝ 80–100։